## Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ  Օ Ր Ա Կ Ա Ր Գ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստ (N 10)**

22 հուլիսի 2011թ. ժամը $15^{00}$

1. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկան կենտրոնի դիալիզի և նեֆրոլոգիայի բաժանմունքի վերանորոգում» ծրագրի մասին:
(Արմեն Պողոսյան)

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան գյուղի միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում» ծրագրի մասին:
(Արմեն Պողոսյան)

3. Երևանի հայ ավետարանական մկրտական քրիստոնյաների եկեղեցու կողմից իրականացվող «Մանուկների բարեգործական ամառային ճամբար» ծրագրի մասին:
(Վիգեն Խաչատրյան)

### 4. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին
(Արման Բարխուդարյան)

4.1 «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

4.2 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 1):

4.3 Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

4.4 «Արցախի ազատամարտիկների միություն» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

4.5 «Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

4.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի N Մ-032-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Արաբկիր» մանուկների բարեգործական հիմնադրամ) (N 1):

4.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N Մ-941-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ):



4.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մարտի 11-ի N Մ-128-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ):

4.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի սեպտեմբերի 11-ի N Մ-642-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագիր):

### 5. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին
(Արման Բարխուդարյան)

5.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Մատենադարան» հիմնադրամ):

5.2 Հայաստանի Հանրապետության կառավարության մարդասիրական օգնության կենտրոնական հանձնաժողովի 2001 թվականի հոկտեմբերի 10-ի N Մ-328-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ):

5.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի N Մ-468-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Ջերմուկ սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցության» հիմնադրամ):

5.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի N Մ-495-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (N 1) («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն):

5.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 28-ի N Մ-120-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ):

### 6. Այլ հարցեր

6.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի սեպտեմբերի 28-ի N Մ-608-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն):

6.2 «Հայ-ֆրանսիական միջազգային առողջապահական ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Գորիսի սրտաբանական կենտրոնի տարածքի բարեկարգում, կահավորում և համալրում» ծրագրի մասին:

6.3 «Հայ-ֆրանսիական միջազգային առողջապահական ասոցիացիա» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

6.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N Մ-944-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գերծարքների մասին:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
2011 թվականի N Մ - - Ա
քաղ. Երևան

N 10/1

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵՎԱՆԻ «ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԴԻԱԼԻԶԻ ԵՎ ՆԵՖՐՈԼՈԳԻԱՅԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-1/ -11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի -ի N ՀԲ/ -11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի -ի N -11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N 3/3-4/ -11 եզրակացությունները,* **որոշում է.**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 47268899 դրամ ընդհանուր արժողությամբ «Երևանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի դիալիզի և նեֆրոլոգիայի բաժանմունքի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Արեվակե» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00862747) 2011 թվականի հուլիսի 1-ին կնքված՝ N ՀՀ/Հ-1/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 46988899 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հազարաշեն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01816381) 2011 թվականի հուլիսի 1-ին կնքված՝ N ՀՀ-02/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերանորոգման աշխատանքների հեղինակային հսկողություն՝ 280000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«14» հուլիսի 2011թ.

« Երևանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի
դիալիզի և նեֆրոլոգիայի բաժանմունքի վերանորոգում»
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարելավել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի դիալիզի և նեֆրոլոգիայի բաժանմունքի հիվանդների և բուժանձնակազմի բուժման և աշխատանքի պայմանները |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ ք. Երևան, առողջապահության բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 47.268.899,00 դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնը |

N 10/1

| | | |
|---|---|---|
| 7. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2011թ հուլիսի 01-ից մինչեւ 2011թ.դեկտեմբերի 01-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ԱՐԵՎԱԿԵ» ՍՊԸ-ի կողմից վերանորոգման իրականացում՝ 46.988.899,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>«Յազարաշեն» ՍՊԸ-ի կողմից վերանորոգման հեղինակային հսկողություն՝ 280.000,00 առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Յամագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Առողջապահության նախարարության հետ: |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

ա. 10/1

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր  Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

ա. 10/1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

15.07.11 № 3/38-1/81696-11

Ձեր №

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 14.07.11թ. N 15/15.1/11856-11 գրության՝ կապված <<Հայաստան>> համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող <<Երևանի <<Սուրբ Գրիգոր Լուսավորիչ>> բժշկական դիալիզի և նեֆրոլոգիայի բաժանմունքի վերանորոգում>> ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/22119-11

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա/ 10/1

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380385
Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am

4316-11
15.07.11

**Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ. հուլիսի 14-ի
15/15.1/11856-11 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» կենտրոնի դիալիզի և նեֆրոլոգիայի բաժանմունքի վերանորոգում» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Գ. Մուրադյան**

035/22011-11

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա. Ստեփանյան, հեռ՝. 380-227

---

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ՆԱԽԱՐԱՐ

Ա/ 10/1

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

21.07.11 N ՀԴ/22/6644-11

Ձեր N ____________________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 14.07.2011թ. թիվ 15/15.1/11856-11 գրության կապակցությամբ՝ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի կողմից իրականացվող «Երևանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ դիալիզի և նեֆրոլոգիայի բաժանմունքի վերանորոգում ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ.ՔՈՒՇԿՅԱՆ

Կատարող Ա.Մկրտչյան
հեռախոս 52 27 21

020/22729-11

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
## ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
## ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Ա.10/1

0015, Երևան, Մ.Խորենացու 3,

Հեռ. 50 20 20, 59 46 05

ԱԱ/3-4/15043-11
19.07.11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 14.07.2011թ. թիվ 15/15.1/11856-11 գրությանը կից ներկայացված «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի դիալիզի և նեֆրոլոգիայի բաժանմունքի վերանորոգում» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

004/22378-11

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2011 թվականի N Մ - - Ա

քաղ. Երևան

Ա.10/2

### «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՔԻՆ ԾԱՂԿԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՄԱՍՆԱԿԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-1/ -11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի -ի N -11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի -ի N 03/07-1/ 11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-4/ -11 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2011 թվականի -ի N 01/21.1/ -11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 1940600 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան գյուղի միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2011 թվականի հուլիսի 11-ին կնքված N ՀՀ-Կ-12/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահույքի պատրաստում և տեղադրում՝ 1940600 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության գիտության և կրթության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«14» հուլիսի 2011թ.

« ՀՀ Տավուշի մարզի Նոր Ծաղկավան գյուղի միջնակարգ
դպրոցի մասնակի կահավորում»
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Մասամբ ապահովել ՀՀ Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան գյուղի միջնակարգ դպրոցը անհրաժեշտ կահույքով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Տավուշի մարզ, Ներքին Ծաղկավան գյուղ, կրթության բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 1.940.600,00 դրամ: |



| | | |
|---|---|---|
| 6. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան գյուղի միջնակարգ դպրոցը |
| 7. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2011թ հուլիսի 11-ից մինչեւ 2011թ.հոկտեմբերի 11-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԱՍՄ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան գյուղի միջնակարգ դպրոցի համար պայմանագրի թիվ 1 հավելվածում նշված գույքի պատրաստում, գնում եւ անհատույց հանձնում՝ 1.940.600,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Գիտության և կրթության նախարարության հետ: |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Հր. 10/2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

15.07.11 №8/13.8-1/81643-11

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 14.07.11թ. N 15/15.1/11858-11 գրության՝ կապված <<Հայաստան>> համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող <<ՀՀ Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան գյուղի միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում>> ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/22126-11

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Հր. 10/2

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380385
Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am

4315-11
15.07.11

**Հայաստանի Հանրապետության կառավարության**
**բարեգործական ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ. հուլիսի 14-ի**
**15/15.1/11858-11 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան գյուղի միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Գ. Մուրադյան**

035/22012-11

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա. Ստեփանյան, հեռ'. 380-227

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

DEPUTY MINISTER

10/2

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 58 03 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

N 03/07-1/7897-11 „15.07" 2011

*ՀՀ կառավարության բարեգործական*
*ծրագրերի համակարգման հանձնաժողովի*
*նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր սույն թվականի հուլիսի 14-ի № 15/15.1/11858-11 գրության՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան գյուղի միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ չունի:

*ՀԱՐԳԱՆՔՈՎ՝* *Մ.ՄԿՐՏՉՅԱՆ*

*Կատ. Ն.Սահակյան*
*հեռ. 524777*

01/22127-11

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

10/2

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

ԿԽ/3-4/5046-11
19.07.11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 14.07.2011թ. թիվ 15/15.1/11858-11 գրությանը կից ներկայացված «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան գյուղի միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

014/22384-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ**

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ТАВУШСКАЯ ОБЛАСТЪ
ГУБЕРНАТОР

REPUBLIC OF ARMENIA
TAVUSH REGION
GOVERNOR

4001, ՀՀ ք. Իջևան Սահմանադրության 1, РА, г, Иджеван Сагманадрутян 1, RA, Ijevan Sahmanadrutyan 1
հեռ.тел.phon. /0263/ 4-00-45, 3-23-56 Ֆաքս՝ /факс , fax / /0263/ 4-00-45
E-mail: tavush@mta.gov.am Կայք WEB http://tavush.region.am

Ար 10/2

01/21/2715-11
21.07.11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. հունվարի 16-ի N66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 13-րդ կետի համաձայն, Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան գյուղի միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում» ծրագրի մասին որոշման նախագիծը քննարկվել է Տավուշի մարզպետարանում և արժանացել հավանության:

Որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

Հարգանքով

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

119/22635-11

Կատարող Գ. Հարությունյան
հեռախոս 0263 3 4561

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**_____ հուլիսի 2011 թվականի N Մ - - Ա**

**քաղ. Երևան**

Ար 10/3

**ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԿՐՏԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-1/ -11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի -ի N -11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի -ի N ՖԲ/ԱնՄ -11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի –ի N եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Երևանի Հայ ավետարանական մկրտական քրիստոնյաների եկեղեցու կողմից իրականացվող՝ 7500000 դրամ ընդհանուր արժողությամբ «Մանուկների բարեգործական ամառային ճամբար» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով Երևանի Հայ ավետարանական մկրտական քրիստոնյաների եկեղեցու կողմից (ՀՎՀՀ՝ 00420726) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Նարինե» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03001997) 2011 թվականի հունիսի 4-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին հանգստյան տան վարձակալում՝ 1200000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Սթար Դիվայդ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02700232) 2011 թվականի հունիսի 24-ին կնքված պայմանագրում (2011 թվականի հունիսի 27-ին կնքված Լրացուցիչ համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է սննդամթերքի ձեռքբերում՝ 4400000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Երևանի Հայ ավետարանական մկրտական քրիստոնյաների եկեղեցուն՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԵՀԱՄՔ եկեղեցու հոգեբարձության
Ի դեմս Ատենապետ Վ. Խաչատրյանի կողմից
«26.» հունիսի 2011 թ.

# ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐ
# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Կազմակերպել 8-15 տարեկան մանուկների ամառային հանգիստը արձակուրդների ժամանակ |
| 2. | Ծրագրի բարեգործական ոլորտի նպատակը | Նախատեսվում սահմանված կարգով ստանալ հարկային արտոնություններ |
| 3. | Բարեգործը | а/я 133 Москва 107078, Фонд "Пшеничное зерно", тел. 8-916-813-66-49, факс 8-499-265-52-75 |
| 4. | Ծրագիրը կատարողը | Երևանի Հայ Ավետարանական Մկրտական Քրիստոնյաների եկեղեցի, Երևան, Նար-Դոս 90, 0018, ՀՎՀՀ՝ 00420726 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 7500000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ տարածքում գործող ինտերնատների մանուկները, ինչպես նաև Երևանի և մարզերի անապահով ընտանիքների երեխաները |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2011 թվականի հուլիսի 6-ից մինչև օգոստոսի 15-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ամառային ճամբարի կազմակերպում (մարզանք, նախաճաշ, դաիլինճային միջոցառումներ, սպորտային խաղեր, ճաշ, զբոսանք, երգեր, բեմադրություններ, ֆիլմերի դիտում, ընթրիք, ազատ ժամ, խաղեր, երեկոյան կլոր սեղան, քուն):<br>Մանուկներ 8-15 տարեկան (հուլիսի 6-ից օգոստոսի 15-ը), 850 երեխա<br>Արարատ քաղաք – 50 երեխա<br>Արևշատ գյուղ - 50 երեխա<br>Շիրակի մարզ - 50 երեխա<br>Գեղարքունիքի մարզ - 40 երեխա |

Հր. 10/3

| | | |
|---|---|---|
| | | Տավուշի մարզ- 30 երեխա<br>Արմավիրի մարզ - 40 երեխա<br>Վայոց ձորի մարզ - 35 երեխա<br>Կոտայքի մարզ - 40 երեխա<br>Արագածոտնի մարզ - 40 երեխա<br>Սյունիքի մարզ – 25 երեխա<br>Լոռու մարզ – 40 երեխա<br>Երևան քաղաք – 160 երեխա<br>Զոհված ազատամարտիկների երեխաներ – 50<br>Նախակրթարաններ և ինտերնատներ – 100 երեխա<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից – 100 երեխա<br>Մթերքի ձեռքբերում – 4400000 դրամ<br>Շենքի վարձավճար – 1200000 դրամ<br>Սպորտային ինվենտարի ձեռքբերում – 264000 դրամ<br>Դեղորայքի ձեռքբերում – 396000 դրամ<br>Տնեսական ապրանքների ձեռքբերում – 278000<br>Հիգիենայի համար նախատեսված նյութեր – 195000 դրամ<br>Առաջնորդների պատրաստման համար սեմինարների կազմակերպում – 80000 դրամ<br>Կազմակերպական ծախսեր – 687000 դրամ (ադմինիստրատիվ և տրանսպորտայի ծախսեր)<br>Ընդամենը՝ 7500000 դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Մթերքի ձեռքբերում – 4400000 դրամ<br>Շենքի վարձակալում - 1200000 դրամ<br>Սպորտային ինվենտարի ձեռքբերում – 264000 դրամ<br>Դեղորայքի ձեռքբերում – 396000 դրամ<br>Տնեսական ապրանքների ձեռքբերում – 278000<br>Հիգիենայի համար նախատեսված նյութեր – 195000 դրամ<br>Առաջնորդների պատրաստման համար սեմինարների կազմակերպում – |

Հր. 10/3

| | | |
|---|---|---|
| | | 80000 դրամ<br>Կազմակերպական ծախսեր - 687000 դրամ (ադմինիստրատիվ և տրանսպորտայի ծախսեր)<br>Ընդամենը՝ 7500000 դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր - 687000 դրամ (ադմինիստրատիվ և տրանսպորտա ծախսեր) |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, քաղաքապետարաններ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կիրականացվի ներկայացուցչական հանձնաժողովի կողմից, որի կազմում կնդգրկվեն մարզպետարաններից, քաղաքապետարան-ներից, եկեղեցուց մեկական անձ:<br>Սահմանված կարգով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով կներկայացվի ամփոփ տեղեկատվություն ծրագրի իրականացման վերաբերյալ |

Հ/ր 10/3


# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ


Հ/ր 10/3


0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26


9.07.2011թ № 3/3.8-1/8130Տ-11

Ձեր №

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 06.07.11թ. N 15/15.8/11123-11 գրության՝ կապված <<Երևանի հայ ավետարանական մկրտական քրիստոնյաների եկեղեցու>> կողմից իրականացվող <<Մանուկների բարեգործական ամառային ճամբար>> ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ ծրագրում անհրաժեշտ է նշել երեխաները ինչ կարգով են օգտվելու ճամբարից վճարովի, թե անվճար:

Հարգանքով

[signature]

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

034/21036-11
9.07.2011թ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ** Ձր. 10/3

N: 4131-11
12.07.2011թ

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380385
էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am

**Հայաստանի Հանրապետության կառավարության**
**բարեգործական ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ. հուլիսի 6-ի**
**15/15.8/11123-11 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ Երևանի հայ ավետարանական մկրտական քրիստոնյաների եկեղեցու կողմից իրականացվող «Մանուկների բարեգործական ամառային ճամբար» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Գ. Մուրադյան**

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա. Ստեփանյան, հեռ՝. 380-227

035/21337-11
12.07.2011թ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ**
**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ** Ձր. 10/3

« 14 » հուլիսի 2011 թ. N ՑԻ/Ա.Ն.Ծ-4/6027

Ձեր 06.07.2011թ, 15/15.8/11123-11

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Քննարկելով «Երևանի հայ ավետարանական մկրտական քրիստոնյաների եկեղեցու կողմից իրականացվող «Մանուկների բարեգործական ամառային ճամբար» ծրագրի մասին» ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝ տեղեկացնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

**Հարգանքներով՝** **Ֆ. Բերիկյան**

Կատարող՝ Միջազգային կապերի
բաժին հեռ. 563791

040/21831-11
14.07.2011թ

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 65, ֆաքս. (374 10) 54 31 60 http://www.mss.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** ձր. 10/3

N: ԱԱ/3-4/4780-11
9.07.2011թ

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 06.07.2011թ. թիվ 15/15.8/11123-11 գրությանը կից ներկայացված «Երևանի հայ ավետարանական մկրտական քրիստոնյաների եկեղեցու կողմից իրականացվող «Մանուկների բարեգործական ամառային ճամբար» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/21150-11
9.07.2011թ.

---

**ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ**
**ՄԿՐՏԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ**

ձր. 10/3

ՏԵՂԵԿԱՆՔ

Տեղեկացնում ենք, որ ԵՀԱՄՔ Եկեղեցու հովանավորությամբ կազմակերպված մանուկների ամառային բարեգործական ճամբարի (06.07.2011-ից 15.08.2011թթ.) ծառայողները իրենց պարտականությունները կատարում են անվարձահատույց:

Տեղեկանքը տրվում է ներկայացնել ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

ԵՀԱՄՔ Եկեղեցու ատենապետ Վ. Խաչատրյան

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
107/22180
«18» 07 2011թ.

1523

Նար Դոս 90
Երևան 0018
հեռ. 010 578962

Ն ԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2011 թվականի N Մ - - Ա

քաղ. Երևան

ՁՐ·10/4.1

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-1/ -11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի -ի N ՀՔ/ -11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-4/ -11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով Միացյալ Արաբական Էմիրությունների «Cameloth LLC» կազմակերպությունից ձեռքբերված մեկ Toyota Niace High Roof Van մակնիշի շտապօգնության մեքենայի (թափքի համարն է՝ JTFPX22P6B0025981, 2200 կգ ընդհանուր քաշով, 48250 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 1750 ԱՄՆ-ի դոլար, ԱՄ ՄԶՄ մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Շտապ օգնության մեքենան նախատեսված է Սյունիքի մարզի Կապան քաղաքի բժշկական կենտրոնին անհատույց հանձնելու համար:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:

ՁՐ·10/3

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Երևանի հայ ավետարանական մկրտական քրիստոնյաների եկեղեցու կողմից իրականացվող «Մանուկների բարեգործական ամառային ճամբար» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| - հայտնում ենք, որ ծրագրում անհրաժեշտ է նշել երեխաները ինչ կարգով են օգտվելու ճամբարից վճարովի, թե անվճար: | Դիտողությունը հաշվի է առնվել, կազմակերպության կողմից ներկայացված պարզաբանումը կցվում է: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

մր. 10/4.1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

18.07.11 № 3/3.8-1/81715-11

Ձեր № ______________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 15.07.2011թ. N15/15.1/11914-11 գրությամբ ներկայացված «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/22138-11

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

մր. 10/4.1

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

20.07.11 N ՀՓ/22/6619-11

Ձեր N ________________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան.

Ձեր 15.07.2011թ. թիվ 15/15.1/11914-11 գրության կապակցությամբ՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ.ՔՈՒՇԿՅԱՆ

020/22592-11

ԿԱՏԱՐՈՂ՝ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ
ՀԵՌԱԽՈՍ 52 27 21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** Նր. 10/4.1

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

19.07.11

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. հուլիսի 15-ի համար 15/15.1/11914-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

22290-11

կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**հուլիսի 2011 թվականի N Մ - - Ա** Նր. 10/4.2
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի 19-ի N 3/3.8-2/81843-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի հուլիսի 19–ի N ՍՔ/22/6553-11, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության 2011 թվականի հուլիսի 19–ի N 8/02.3/1365-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի 2011 թվականի հուլիսի -ի N և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 19-ի N ԱԱ/3-6/5049-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ատոմային էներգիայի միջազգային գործակալության հետ տեխնիկական համագործակցության ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի (տեխնեցիումի գեներատոր (99Mo/99m Tc), 1 տեղ, 17 կգ ընդհանուր քաշով, 1153.89 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 259.9 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:
3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

Ժ.10/4.2

19.07.11թ. № 3/3.8-2/81843-11

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 15.07.2011թ. N15/15.11/11925-11 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N1) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ա. Բաղանյան, հեռ. 595-227

19.07.11թ.

№ 034/22438-11

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 56 43 20
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ *info@moh.am*

Ժ.10/4.2

19.07.11թ. N ԱՔ/22/6553-11
Ձեր N ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 18.07.2011թ. թիվ 15/15.11/11925-11 գրության կապակցությամբ՝ «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ս.ՔՐՄՈՅԱՆ

?????? ???????
Jul 19 2011 3:44 PM

*Կատարող Ա.Մկրտչյան*
*հեռախոս 52 27 21*

19.07.11թ.

№ 020/22436-11

ձր. 10/4.2

«19» հուլիս 2011թ.

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

N° 8/02.3/1365-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ- ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 2011 թվականի հուլիսի 15-ի N 15/15.11/11925-11 գրության՝ տեղեկացնում եմ, որ «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագիրը նպատակահարմար ենք գտնում որակել որպես բարեգործական:

Հարգանքով՝

Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Կատարող՝ Գ. Պողոսյան
Հեռ.՝060 440 227

Հասցե՝ ՀՀ,ք Երևան, 0054, Դավիթաշեն 4, Ա.Միկոյան փող. 109/8
Հեռ.՝ (+ 37410)362015,ֆաքս՝(+37410)363949
Էլ.փոստ՝ mes@mes.am, կայք՝ www.mes.am

19.07.11թ.
№ 052/22418-11

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ձր. 10/4.2

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

19.07.11թ.
№ ՇՀՀ/3-6/5049-11

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. հուլիսի 15-ի համար 15/15.11/11925-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N1)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

19.07.11թ.
№ 044/22373-11

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ու Մ

2011 թվականի N Մ- -Ա Մ-10/4.3
քաղ. Երևան

### ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-2/ -11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-6/ -11 եզրակացությունները* **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել անհատ բարերար Լևոն Հայրապետյանի կողմից Արաբական էմիրություններից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության հասցեով ուղարկված բեռի (6205 տեղ, 2287 կգ ընդհանուր քաշով, 37171 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժեքով, բեռնափոխադրման ծախսերը կազմել են 3600 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, Սյունիքի ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Վանք համայնքի դպրոցի և մանկապարտեզի համար:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

## ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ

բարերար Լևոն Հայրապետյանի կողմից ԼՂՀ սոցապահովության նախարարության հասցեով ԼՂՀ Մարտակերտի շրջանի Վանք համայնքի համար ուղարկված բեռի Մ-10/4.3

| Հ.Հ. ը/կ | Ապրանքի անվանումը | Քանակը/տեղը | Արժեքը ՀՀ դրամ | Ում համար է նախատեսված |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Խոհանոցային պարագա՝ շամպայնի շշերի տակդիրներ | 2 | 126189 | դպրոց |
| 2. | Ձեռքի էլ. չորանոց HAND DRIER SBS 8086 | 1 | 142233 | մանկապարտեզ |
| 3. | Հեռուստացույց 32" SAMSUNG B352 | 7 | 1092532 | մանկապարտեզ |
| 4. | Կվադրոցիկլ | 5 | 2706314 | դպրոց |
| 5. | Անվադողեր կվադրոցիկլի | 10 | 286311 | դպրոց |
| 6. | Կվադրոցիկլի զտիչ բենզինի | 1 | 54778 | դպրոց |
| 7. | Կվադրոցիկլի արգելակների կոմպլեկտ | - | 166091 | դպրոց |
| 8. | Փաթեթավորման թուղթ նվերների համար | 4 | 341918 | մանկապարտեզ |
| 9. | Պալատկաներ տուրիստական | 2 | 43194 | դպրոց |
| 10. | Օֆիսային պահարան 6 դռնանի | 2 | 354768 | դպրոց |
| 11. | Բարերում օգտագործվող կահույք փայտից՝ կախիչ-տակդիր բաժակների համար /կոմպլեկտ/ | 2 | 569432 | դպրոց |
| 12. | Սեղան-աթոռ կոմպլեկտ /1-8/ | 3 | 476064 | դպրոց |
| 13. | Բազմոց անկյունային 4 տեղանոց կաշվեպատ | 2 | 324137 | մանկապարտեզ |
| 14. | Բազկաթոռ կաշվեպատ | 1 | 95173 | մանկապարտեզ |
| 15. | Կահույք նախասրահի կտորածածք 3-կտորից /1կոմպլեկտ/ | 3 | 356307 | մանկապարտեզ |
| 16. | Գրասեղան | 1 | 74572 | դպրոց |
| 17. | Պլաստմասե սեղան սրճարանի | 1 | 83365 | մանկապարտեզ |
| 18. | Ճաշասենյակի սեղան | 2 | 441734 | մանկապարտեզ |
| 19. | Ճաշասենյակի կահույք /կոմպլեկտ/ | 12 | 1046034 | մանկապարտեզ |
| 20. | Գրասեղաններ իր դարակամասերով | 10 | 346714 | դպրոց |
| 21. | Ապակյա վազաներ | 2 | 53664 | դպրոց |
| 22. | Ապակյա վազաներ, ափսեներ, սկուտեղներ, ափսեներ օվալաձև, բլուդ | 7 | 63877 | դպրոց |
| 23. | Դեկորատիվ նկարներ | 8 | 83159 | դպրոց/ մանկապարտեզ |
| 24. | Ժամացույցներ պատի | 1 | 17501 | դպրոց/ մանկապարտեզ |
| 25. | Մկրատներ մետաղ կտրելու համար | 1 | 3257 | դպրոց |
| 26. | Կափարիչներ սննդի | 1 | 6358 | մանկապարտեզ |
| 27. | Կափարիչներ սննդի | 1 | 6055 | մանկապարտեզ |
| 28. | Պլ. դեկորատիվ ջրվեժ | 1 | 66790 | մանկապարտեզ |
| 29. | Լողավազաններ | 2 | 123727 | մանկապարտեզ |
| 30. | Հայելի շրջանակներով | 1 | 206263 | դպրոց/ մանկապարտեզ |
| 31. | Մետաղական կախիչներ | 1 | 18453 | դպրոց/ մանկապարտեզ |
| 32. | Տեսախցիկ հսկողական PROLINE UK PR668 | 1 | 389258 | դպրոց |
| 33. | Հեծանիվներ երկանիվ | 10 | 378806 | դպրոց |
| 34. | Հեծանիվների համար անվադողեր | 20 | 31572 | դպրոց |
| 35. | Շղթաներ հեծանիվների համար օգտագործվող | 1 | 12894 | դպրոց |
Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/22381-11
19.07.2011թ.

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ հուլիսի 2011 թվականի N Մ- -Ա Մ. 10/5.3
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N Մ-495-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
**(«Ջերմուկ սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցության» հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի -ի N 3/3.8-1/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի -ի N ԱԱ/3-4/-11 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Սահմանել, որ «Ջերմուկ սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցության» հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 09104402) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի «Ջերմուկ սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցության» հիմնադրամի կողմից իրականացվող «Ջերմուկ քաղաքի առողջարանային մասի արտաքին լուսավորության ցանցի վերակառուցում և արդիականացում» ծրագրի մասին» N Մ-495-Ա որոշմամբ հստատված ծրագրի իրականացման հետ և դրամ համար ունի զգալի նշանակություն՝

2. «Էներգոցանցնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ (ՀՀ, քաղ. Երևան, Արմենակյան 129, ՀՎՀՀ՝ 01505563) 2011 թվականի մայիսի 30-ին կնքված N ՔՍՏՁԱՀ-ԱԾՁԲ-01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Ջերմուկ քաղաքային համայնքի փողոցային լուսավորվածության հիմնանորոգման, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության անցկացման աշխատանքների իրականացում՝ 4.000.000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Ար·10/5.3

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

N: ԱԱ/3-4/5108-11
21. 07. 2011թ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 19.07.2011թ. թիվ 15/15.8/12098-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի NՄ-495-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Ջերմուկ սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցության» հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/22617-11
21. 07. 2011թ

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**___ հուլիսի 2011 թվականի N Մ-            -Ա**
**քաղ. Երևան**

Ար·10/5.4

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N Մ-468-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N 1)

<u>**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**</u>

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի -ի N 3/3.8-1/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի -ի N ԱԱ/3-4/-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտի ենթակառույցների բարելավում» ծրագրի մասին» N Մ-468-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ջեյթուն կահույքի ֆաբրիկա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00809654) 2011 թվականի հունիսի 24-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական, էլեկտրոմոնտաժային և բարեկարգման աշխատանքների իրականացում՝ 67018400 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

Ա-10/5.4

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

15.07.2011թ. № 3/3.8-1/21697-11

Ձեր № ____________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 15.07.11թ. N 15/15.6/11865-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ. հունիսի 17-ի N Մ-468-Ա (<<Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա>> իրավաբանական անձանց միություն) որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի (<<Ձեյթուն կահույքի ֆաբրիկա>> ԲԲԸ-ի հետ կնքված գործարք) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/22116-11
15.07.2011թ.

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

Ա-10/5.4

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

№ ՆՈւ/3-4/5047-11
19.07.2011թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 15.07.2011թ. թիվ 15/15.6/11865-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի NՄ-468-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (N1) («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.

«Ձեյթուն կահույքի ֆաբրիկա» ԲԲԸ հետ կնքված գործարքը հիմնավորող կից ներկայացված պայմանագրի 4.1 կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամկետ է սահմանված մինչև 2012թ. դեկտեմբերի 1-ը, այն դեպքում երբ վերոնշյալ որոշմամբ հաստատված ծրագիրը նախատեսված է իրականացնել մինչև ս/թ. դեկտեմբերի 1-ը: հաշվի առնելով վերոնշյալը, առաջարկում եմ ներկայացված գործարքը համապատասխանեցնել վերոնշյալ ծրագրին:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/22383-11
19.07.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ
FOOTBALL FEDERATION OF ARMENIA

Ար·10/5-7

21.07.2011 թ.
Ֆ/1 091

ՀՀ Կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահի պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի լրումն մեր կողմից ուղարկված 12.07.2011 թ-ի Ֆ/1 088 գրության, Ձեզ ենք ներկայացնում 24.06.2011թ «Ձեյթուն կահույքի ֆաբրիկա» ԲԲԸ-ի հետ կնքված կապալի պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագրի պատճենը:

Հարգանքներով՝

ՀՖՖ նախագահ
Ռ. Հայրապետյան

094/2271
07

ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, 0010, ԵՐԵՎԱՆ, ԽԱՆՋՅԱՆ 27
0010 KHANJYAN str. 27, YEREVAN, REPUBLIC OF ARMENIA
ՀԵՌԱԽՈՍ/PHONE: +374 10 54 88 85, ՖԱՔՍ/FAX: +374 10 54 71 73
e-mail: ffarm@arminco.com, URL: www.ffa.am

Ար·10/5-7

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի N Մ-468-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N 1 («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ | |
| «Ձեյթուն կահույքի ֆաբրիկա» ԲԲԸ հետ կնքված գործարքը հիմնավորող կից ներկայացված պայմանագրի 4.1 կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամկետ է սահմանված մինչև 2012թ. դեկտեմբերի 1-ը, այն դեպքում երբ վերոնշյալ որոշմամբ հաստատված ծրագիրը նախատեսված է իրականացնել մինչև ս/թ. դեկտեմբերի 1-ը: հաշվի առնելով վերոնշյալը, առաջարկում եմ ներկայացված գործարքը համապատասխանեցնել վերոնշյալ ծրագրին: | Հաշվի է առնվել: |

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

*14 հուլիսի 2011թ.* *ք. Երևան*

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» ԻԱՄ-ն՝ ի դեմս գործադիր տնօրեն *Ա. Մինասյանի*, այսուհետ *«Պատվիրատու»*, մի կողմից և «Զեյթուն կահույքի ֆաբրիկա» ԲԲԸ-ն՝ ի դեմս գործադիր տնօրեն Վ.Դավթյանի, այսուհետ *«Կապալառու»*, մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին

Սույն համաձայնագրով «Պատվիրատու»-ն և «Կապալառու»-ն համաձայնություն ձեռք բերեցին փոփոխելու 24.06.2011թ-ին կնքված կապալի պայմանագրի 4.1 կետը և այն շարադրել հետևյալ կերպ՝

4.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է 24.06.2011թ-ից մինչև 01.12.2011թ-ը:

«Պատվիրատու»
«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» ԻԱՄ

Երևան, Խանջյան 27
«Զարգացման հայկական բանկ»
ՀՀ 1810052117413313
Հվհհ. 02566915

Առաջին փոխնախագահ-
գործադիր տնօրեն
*Արմեն Մինասյան*

ստորագրություն

«Կապալառու»
«Զեյթուն Կ/Ֆ» ԲԲԸ

ք. Երևան, Ռուբինյանց 27
«Զարգացման հայկական բանկ»
ՀՀ 1810052126573312
ՀՎՀՀ 00809654

Գործադիր տնօրեն
*Վահագն Դավթյան*

ստորագրություն

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**2011 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N Մ-120-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ՖԵԴԵՐԵՅՇՆ, ԻՆԿ.» ԱՄԵՐԻԿՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի . -ի N 3/3.8-1/ -11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-4/ -11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 28-ի «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության» ծրագրի մասին» N Մ-120-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բարսիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02230504) 2011 թվականի հուլիսի 14-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նշված ապրանքների մատակարարում՝ 412304 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** Ա1.10/5.5

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

ԱԿ/3-4/5111-11
21.07.11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 19.07.2011թ. թիվ 15/15.1/12102-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 28-ի NՄ-120-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սեյվ Դը Չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/22630-11

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

Ա1.10/5.5

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

МАРЗПЕТ АРМАВИРА

<< 21 >> 07 2011թ. N 01/06/2223-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 19.07.2011թ. N 15/15.1/12102-11 գրության տեղեկացվում է, որ «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 28-ի N Մ-120-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ)» որոշման նախագիծը քննարկվել է ՀՀ Արմավիրի մարզպետարանում և հավանության արժանացել:

Չենք առարկում այն որպես բարեգործական որակելու:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

կատ՝ Լ.Մուրադյան
Ծ.Գրիգորյան

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ հուլիսի 2010 թվականի N Մ- -Ա

քաղ. Երևան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի N Մ-608-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի -ի N 3/3.8-1/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի -ի N ԱԱ/3-4/-11 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի սեպտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի մարտի 2-ի N Մ-153-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)» N Մ-608-Ա որոշման 1-ին կետում «1972200000 դրամ» բառերը փոխարինել «3328700000 դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---


## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26


19.07.2011թ. № 3/3.8-1/81844-11

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 15.07.11թ. N 15/15.6/11866-10 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007թ. սեպտեմբերի 28-ի N Մ-608-Ա (<<Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա>> իրավաբանական անձանց միություն) որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/22437-11
19.07.2011թ.

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

---


## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

### ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05


№ ԱԱ/3-4/5045-11
19.07.2011թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 15.07.2011թ. թիվ 15/15.6/11866-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի սեպտեմբերի 28-ի NՄ-608-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/22385-11
19.07.2011թ.

**<u>ՆԱԽԱԳԻԾ</u>**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Հ/Ր 10/6.2

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**___ հուլիսի 2011 թվականի N Մ - -Ա**

**քաղ. Երևան**

**«ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳՈՐԻՍԻ ՍՐՏԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ, ԿԱՀԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԼՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի -ի N 3/3.8-1/-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի հուլիսի -ի N -11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի հուլիսի -ի N -11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի -ի N ԱԱ/3-4/-11 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Հայ-ֆրանսիական միջազգային առողջապահական ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Զարոբյան 10/1, բն. 7, ՀՎՀՀ՝ 00085864) իրականացվող՝ 76 մլն դրամ ընդհանուր արժողությամբ «Գորիսի սրտաբանական կենտրոնի տարածքի բարեկարգում, կահավորում և համալրում» ծրագիրը (կցվում է):

2. «Հայ-ֆրանսիական միջազգային առողջապահական ասոցիացիա» հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Action Santé Arménie France

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայ-ֆրանսիական միջազգային առողջապահական ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ Մ. Բազիլյանի կողմից

«18» հուլիսի 2011 թ.

«Գորիսի սրտաբանական կենտրոնի տարածքի բարեկարգում, կահավորում և համալրում»

Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Հայ-ֆրանսիական առողջապահական շարժում» բարեգործակա կազմակերպության միջոցներով և «Հայաստան» համահայկակա հիմնադրամի աջակցությամբ Հայաստանի Հանրապետության Սյունիք մարզի Գորիս քաղաքում կառուցված սրտաբանական կենտրոն տարածքի բարեկարգում, ներքին հարդարում, կահավորում սարքավորումներով համալրում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանվա արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Հայ-ֆրանսիական առողջապահական շարժում» բարեգործակա կազմակերպության (12-14 Rue Saint Bazile, 13001 Marseille, France) |

Հ/Ր 10/6.

12-14 Rue Saint Bazile,13001 Marseille.France,Tél :+ 33491621708./+33622212222
site web : http://asafmarseille.free.fr e-mail : avet@free.fr

Action Santé
Arménie France

| | | |
|---|---|---|
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայ-ֆրանսիական միջազգային առողջապահական ասոցիացիա հասարակական կազմակերպություն (քաղ.Երևան, Չարենցյան 10/1 բն 7 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս քաղաք, առողջապահության բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | նախատեսվում է 76000000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Սյունիքի տարածաշրջանի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչությունը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2011 թվականի հուլիսի 1-ից մինչև 2011 թվականի դեկտեմբերի 30-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Արտաքին բարեկարգման աշխատանքներ՝ շուրջ 10 մլն դրամ, 01.07.2011-ից մինչև 31.10.2011թ., 2. Ներքին հարդարման աշխատանքներ՝ շուրջ 5 մլն դրամ, 01.07.2011-ից մինչև 31.10.2011թ., 3. Կահավորում՝ շուրջ 30 մլն դրամ, 01.07.2011-ից մինչև 30.12.2011թ., 4. Սարքավորումների ձեռքբերում և տեղադրում՝ շուրջ 31 մլն դրամ, 01.07.2011-ից մինչև 30.12.2011թ.: |

12-14 Rue Saint Bazile,13001 Marseille,France,Tél :+ 33491621708./+33622212222
site web : http://asafmarseille.free.fr e-mail : avet@free.fr

Action Santé
Arménie France

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Սրտաբանական կենտրոնի տարածքի բարեկարգում ճանապարհի ասֆալտապատում՝ շուրջ 10 մլն դրամ, 2. Ներքին հարդարման աշխատանքներ՝ շուրջ 5 մլն դրամ, 3. Կահավորման աշխատանքների իրականացում՝ գույքի ձեռքբերու (հիվանդանոցային և հիվանդասենյակի կահույք, մահճակալնե համակարգչային ու կենցաղային սարքավորումներ) 30 մլն դրամ, 4. Անհրաժեշտ բժշկական սարքավորումների, պարագաների գործիքների ձեռքբերում՝ շուրջ 31 մլն դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Հայաստանի Հանրապետության առողջապահությա նախարարություն |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման արդյունավետությունը վերահսկվելու դոնոր կազմակերպության կողմից, ինչպես նաև օրենքով սահմանվա կարգով իրականացման ընթացքի և ավարտի վերաբերյա տեղեկատվություն է ներկայացվելու Հայաստանի Հանրապետությա կառավարության բարեգործական ծրագրերի համակարգմա հանձնաժողովին: |

Նախագահ Մ. Բազիկյան ..............................

12-14 Rue Saint Bazile,13001 Marseille,France,Tél :+ 33491621708./+33622212222
site web : http://asafmarseille.free.fr e-mail : avet@free.fr

մ/ 10/6.2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

22.07.2011թ. № 3/3.8-1/82015-11

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 19.07.11թ. N 15/15.8/12105-11 գրության՝ կապված <<Հայ-ֆրանսիական միջազգային առողջապահական կազմակերպության>> կողմից իրականացվող <<Գորիսի սրտաբանական կենտրոնի տարածքի բարեկարգում, կահավորում և համալրում>> ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ ծրագրի 9-րդ կետում անհրաժեշտ է մանրամասնել գնվող ապրանքները, դրանց քանակը և կատարվող աշխատանքները:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/22810-11
22.07.2011թ.

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

---

մ/ 10/6.2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

*0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380389*
*Էլ. փոստ՝ press@moj.am*

№ 01/4450-11
20.07.2011թ.

**Հայաստանի Հանրապետության կառավարության**
**բարեգործական ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ. հուլիսի**
**19-ի 15/15.6/12105-11 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Հայ-ֆրանսիական միջազգային առողջապահական ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Գորիսի սրտաբանական կենտրոնի տարածքի բարեկարգում, կահավորում և համալրում» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

035/22541-11
20.07.2011թ.

**Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն, Ա. Մկրտչյան, հեռ. 380-227**

Հր. 10/6.2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

22.07.2011թ. N ՀՖ/22/6659-11

Ձեր N ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 20.07.2011թ. թիվ 15/15.6/12105-11 գրության կապակցությամբ՝ «Հայ-Ֆրանսիական միջազգային առողջապահական ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Գորիսի սրտաբանական կենտրոնի տարածքի բարեկարգում, կահավորում և համալրում» ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ. ՔՈՒՇԿՅԱՆ

Կատարող Ա.Մկրտչյան
հեռախոս 52 27 21

020/22826-11
22.07.2011թ.

Հր. 10/6.2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

№ ԱԱ/3-4/5110-11
21.07.2011թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 19.07.2011թ. թիվ 15/15.6/12105-11 գրությանը կից ներկայացված «Հայ-ֆրանսիական միջազգային առողջապահական ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Գորիսի սրտաբանական կենտրոնի տարածքի բարեկարգում, կահավորում և համալրում» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/22624-11
21.07.2011թ.

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀՐ 10/6.3

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**___ հուլիսի 2011 թվականի N Մ - -Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի -ի N 3/3.8-2/-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի հուլիսի -ի N ՀՔ/22/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հուլիսի -ի N ԱԱ/3-6/-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել Ֆրանսիայի «Հայ-ֆրանսիական առողջապահական շարժում» բարեգործական կազմակերպության կողմից որպես օժանդակություն Գորիսի նորակառույց սրտաբանական կենտրոնի համար «Հայ-ֆրանսիական միջազգային առողջապահական ասոցիացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված գույքի և կահույքի (59 տեղ, 11000 կգ ընդհանուր քաշով, 73700 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 7070 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայ-ֆրանսիական միջազգային առողջապահական ասոցիացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռը համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

ՀՐ 10/6.2

21.07.2011թ. №3/3.8-2/81992-11

Ձեր № ____________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 19.07.2011թ. N15/15.6/12106-11 գրությամբ ներկայացված «Հայ-ֆրանսիական միջազգային առողջապահական ասոցիացիա» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ա. Ջանջուղազյան

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ա. Բաղդանյան, հեռ. 595-227

034/22720-11
21.07.2011թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Ար 10/6.3

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

22.07.2011թ N ՍՓ/22/6663-11

Ձեր N ______________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 20.07.2011թ. թիվ 15/15.6/12106-11 գրության կապակցությամբ՝ «Հայ-Ֆրանսիական միջազգային առողջապահական ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Գորիսի սրտաբանական կենտրոնի տարածքի բարեկարգում, կահավորում և համալրում» ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ. ՔՈՒՇԿՅԱՆ

Կատարող Ա.Մկրտչյան
հեռախոս 52 27 21

020/22822-11
22.07.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ Ար. 10/6.3

№ ԱԱ/3-6/5136-11
21.07.2011թ.

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. հուլիսի 19-ի համար 15/15.6/12106-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայ-ֆրանսիական միջազգային առողջապահական ասոցիացիա» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

044/22700-11
21.07.2011թ

կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

Հր. 10/6.4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**հուլիսի 2011 թվականի N Մ - - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-944-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Երազ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի -ի N և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի -ի N եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, «Երազ» բարեգործական հիմնադրամի (ՀՎՀՀ՝ 01570518) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Երազ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Շաքարային դիաբետով հիվանդ երեխաներին դեղամիջոցների, բժշկական սարքերի ու պարագաների և բժշկական ու հոգեբանական օգնության կամ հետազոտությունների նպատակով ֆինանսական միջոցների տրամադրում» N Մ-944-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՊԻԿՈ-ՎԻԿՈ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00871025) 2011 թվականի հուլիսի 18-ին կնքված՝ 18/07 առքուվաճառքի պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գրենական պիտույքների և այլ գրասենյակային պարագաների գնում՝ 100 000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Վահագն Մոելիք-Մարտիրոսյան» ԱՁ-ի հետ (ՀՎՀՀ՝ 21304935) 2011 թվականի հուլիսի 14-ին կնքված՝ 14/07 առքուվաճառքի պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ժամանակակից տեխնիկայի գնում՝ 400 000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Երևանի քաղաքապետարան:

Հր. 10/6.4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

22. 07. 11թ. № 3/3.8-1/82014-11

Ձեր № ____________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 19.07.11թ. N 15/15.4/12083-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010թ. դեկտեմբերի 24-ի N Մ-944-Ա (<<Երազ>> բարեգործական հիմնադրամ) որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին որոշման նախագծի (<<ՊԻԿՈ-ՎԻԿՈ>> ՍՊԸ-ի և <<Վահագն Մելիք-Մարտիրոսյանի>> ԱՁ-ի հետ կնքված պայմանագրեր) հետ, հայտնում ենք, որ որոշման նախագծին կցված (<<ՊԻԿՈ-ՎԻԿՈ>> ՍՊԸ) պայմանագրում նշված չէ պայմանագրի արժեքը:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

22. 07. 11թ.
№ 034/22812-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**


դր. 10/6.4


0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05


21. 07. 11 թ.
№ ՀՀՆ/3-4/5112-11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 19.07.2011թ. թիվ 15/15.4/12083-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի NU-944-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Երազ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

21. 07. 11 թ.
№ 044/22634-11

---

դր. 10/6.4

ԱՌՔՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 18/07

ք. Երևան «18» հուլիս 2011 թ.

«ՊԻԿՈ-ՎԻԿՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն ի դեմս տնօրեն Արսեն Անդրեասյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մի կողմից, և «ԵՐԱԶ» բարեգործական հիմնադրամը, ի դեմս տնօրեն Կարինե Մխիթարյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Վաճառողը պարտավորվում է Գնորդին, որպես սեփականություն, հանձնել ապրանք, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար:

1.2. Սույն պայմանագրին համապատասխան՝ ապրանք է համարվում գրենական պիտույքներ և այլ գրասենյակային պարագաներ, այսուհետ Ապրանք :

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Վաճառողն իրավունք ունի՝

2.1.1 պահանջել Գնորդից վճարելու ապրանքի համար, իսկ ուշացման դեպքում՝ նաև տոկոսներ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածին համապատասխան.

2.2. Վաճառողը պարտավոր է՝

2.2.1. Գնորդին հանձնել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ապրանքը՝ սույն պայմնագրով նախատեսված պայմաններին համապատասխան:

2.3. Գնորդն իրավունք ունի՝

2.3.1. եթե Վաճառողը հրաժարվում է հանձնել վաճառված ապրանքը, միակողմանի հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց.

2.3.2. եթե Վաճառողը հանձնել է սույն պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը կամ հրաժարվել չհանձնված ապրանքի համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը.

2.3.3.եթե հանձնված է անպատշաճ որակի ապրանք, իր ընտրությամբ պահանջել՝

ա) համաչափ պակասեցնելու ապրանքի գինը.

բ) ողջամիտ ժամկետում անհատույց վերացնելու ապրանքի թերությունները.

գ) հատուցելու ապրանքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը.

2.3.4. չվերացվող թերություններ հայտնաբերելու դեպքում, իր ընտրությամբ՝

ա) հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը.

բ) պահանջել փոխարինելու անպատշաճ որակի ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով.

2.3.5. անկոմպլեկտ ապրանք հանձնելու դեպքում իր ընտրությամբ պահանջել՝

ա) համաչափ պակասեցնելու ապրանքի գինը.

բ) ողջամիտ ժամկետում կոմպլեկտավորելու ապրանքը.

2.4. Գնորդը պարտավոր է՝

2.4.1. ապրանքի համար վճարել սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված կարգով.

2.4.2. ապրանքը Վաճառողից ընդունելու ժամանակ ստուգել ապրանքի անվանման, քանակի և որակի համապատասխանությունը: Ապրանքն ընդունելու արդյունքում կողմերը կազմում և ստորագրում են ապրանքի

ԺՊ.10/6.4

ընդունման - հանձնման ակտ, որում նշվում է ապրանքի անվանումը, քանակը, որակը, հայտնաբերված թերությունները, կնքում ստորագրում են նաև հաշիվ ապրանքագրերը:

### 3. Հաշվարկները

3.1. Պայմանագրին ընդհանուր գումարը հազմում է 100 000 (հարյուր հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ:

3.2. Գնորդը պայմանագրի 3.1. կետում նշված գումարը վճարում է Վաճառողին Ապրանքներիի ծեռք բերման ժամանակ՝ կանխիկ կամ փոխանցումով: Գնորդը վճարում է մատակարարված Ապրանքների դիմաց դրանք ստանալուց հետո 7 բանկային օրվա ընթացքում:

3.3. Եթե Գնորդը պայմանագրով սահմանված ժամկետում չկատարի հանձնված ապրանքի համար վճարելու իր պարտականությունները, ապա Վաճառողն իրավունք ունի հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց:

3.4. Ապրանքների համար վճարումը կատարվում է ՀՀ դրամով՝ Վաճառողի բանկային հաշվին համապատասխան գումարի փոխանցումով կամ կանխիկ:

3.5. Գնի ցանկացած փոփոխություն կարող է կատարվել կողմերի փոխադարձ համաձայնության առկայության դեպքում:

### 4. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

4.1. Վաճառողը Ապրանքը հանձնում է Գնորդին կամ սույն պայմանագրին կից հաշիվ ապրանքագրերում նշված ստացողին՝ նշված ծավալներով և ժամկետներում:

4.2. Ապրանքի հանձնում–ընդունում կատարվում է Ապրանքը հանձնելու մասին երկկողմ ստորագրված և կնքված հաշիվ ապրանքագրերի և հանձման –ընդունման հիման վրա:

### 5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Վաճառողի կողմից ապրանքը հանձնելու կետանցի դեպքում նա Գնորդին վճարում է ապրանքը հանձնելու պարտականությունը կատարելու ժամկետի սկզբից կետանցի յուրաքանչյուր օրվա համար տույժ՝ ապրանքի գնի 0.1 տոկոսի չափով:

5.2. Կողմերը սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում, իրենց պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

### 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա հետևանք է անհաղթահարելի ուժի ազդեցության,որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

### 7. Այլ պայմաններ

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և գործում է 01.12.2011թ.:

7.2. Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր՝ հավելվածների տեսքով:

7.3. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

ԺՊ.10/6.4

7.4. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ և մեկ օրինակ ՀՀ Կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման Հանձնաժողովին :

### 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| Վաճառող | Գնորդ՝ |
|---|---|
| «ՊԻԿՈ-ՎԻԿՈ» ՍՊԸ | «ԵՐԱԶ» ԲՀ |
| իրավ. հասցե՝ ՀՀ ք. Երևան, Ավան, Դուրյան թաղ. 37$_2$. Բն.42 | իրավ. հասցե՝ ՀՀ ք. Երևան, Բայրոնի 4, բն. 11 |
| գործ. հասցե՝ ՀՀ ք. Երևան, Եկմալյան 6 | գործ. հասցե՝ ՀՀ ք. Երևան, Ազատության 27 |
| «Էյչ-Էս-Բի-Սի բանկ» ՓԲԸ | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 21700005056478001 | Հ/Հ 1150007867940100 |
| ՀՎՀՀ 00871025 | ՀՎՀՀ 01570518 |
| Տնօրեն՝Ա. Անդրեասյան | Տնօրեն՝ Կ. Մխիթարյան |
| ստորագրություն | ստորագրություն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի Մ-944-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Երազ» բարեգործական հիմնադրամ) որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարության առաջարկության և դիտողության վերաբերյալ | |
| ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ որոշման նախագծին կցված (<<ՊԻԿՈ-ՎԻԿՈ>> ՍՊԸ) պայմանագրում նշված չէ պայմանագրի արժեքը: | Պայմանագրի գումարը նշված է՝ 100 000 ՀՀ դրամ (պայմանագիրը կցվում է): |

մր.10/6.4